ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

№ - 020/
22 հուլիսի 2024թ.

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մ.Բաղրամյան 26, Հեռ.(0252)2-43-93
Կայք՝ www.aparan.am էլ.փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com

<<ՏԱՐՈՆ-ԳԳ >> ՍՊԸ-ին
taron. baghramyan77@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանիորեն լուծարելու մասին

Հարգելի գործընկեր.

Հայտնում եմ Ձեզ այն մասին, Ապարանի համայնքապետարանի կարիքների համար Ապարան համայնքի համայնքապետարանի վարչական շենքի 2-րդ և 3-րդ հարկերի վերանորոգման աշխատանքներ ձեռքբերման նպատակով Ապարանի համայնքապետարանի և ՏԱՐՈՆ-ԳԳ ՍՊԸ-ի միջև 2023թվականի օգոստոսի 31-ին <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի պայմանով կնքվել է աշխատանքների կատարման ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԱՇՁԲ-78/23 ծածկագրով պայմանագիրը՝ 8 232 192 /ութ միլիոն երկու հարյուր երեսուներկու հազար մեկ հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ արժողությամբ: 2023թվականի նոյեմբերի 30-ին հատկացվել են ֆինանսական միջոցներ, կնքվել է Համաձայանագիր N1-ը, որով պայմանագիրը մտել է ուժի մեջ, և աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 28.02.2024թվականը: 26.12.2023թվականին ՏԱՐՈՆ-ԳԳ ՍՊԸ-ն գրությամբ դիմել է պատվիրատուին պայմանագրի ժամկետը երկարաձգել երեսուն օրացուցային օրով: Սակայն պատասխանատու ստորաբաժանումը, հաշվի առնելով, որ աշխատանքների կատարման վերջնաժամկետը դեռևս չի ավարտվել, բանավոր տեղեկացրել է ՏԱՐՈՆ-ԳԳ ՍՊԸ-ին, որ պայմանագրի ժամկետի երկարաձգումը կկատարվի վերջնաժամկետը ավարտվելուց հետո: Կապալառուի կողմից 29.01.2024թվականին ներկայացվել է 3 628 440/երեք միլիոն վեցը հարյուր քսանութ հազար չորսը հարյուր քառասուն/ ՀՀ դրամի)կատարողական ակտ, որը հաստատվել է և վճարվել: 29.02.2024թվականին ՏԱՐՈՆ-ԳԳ ՍՊԸ-ի էլ. փոստին ծանուցվել է պայմանագրի ժամկետի երկարաձգման և լրացուցիչ աշխատանքների կատարման Համաձայանագիր N2-ը, որով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 29.03.2024թվականը:Սակայն ՏԱՐՈՆ-ԳԳ ՍՊԸ-ի կողմից ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԱՇՁԲ-78/23 ծածկագրով պայմանագրի 8.15 կետով սահմանված ժամկետում չի ներկայացվել Համաձայանագիր N2-ը:Պատասխանատու ստորաբաժանման 04.04.2024թվականի գրութանն ի պատասխան Կապալառու կողմից բազմաթիվ անգամ խոստումներ են տրվել համաձայնագիրը ներկայացնելու և աշխատանքները վերսկսելու վերաբերյալ, սակայն Կապալառուն չի ներկայացրել Համաձայնագիրը և աշխատանքները թողել է անավարտ:

Միաժամանակ հայտնում եմ,որ Պատվիրատուի ղեկավարը, ելնելով վերոգրյալից, <<22>> հուլիսի 2024 թվականի որոշմամբ չկատարված մասով միակողմանիորեն լուծարել է պայմանագիրը:

Հայտնում եմ Ձեզ, որ համաձայն պայմանագրի 8.11 կետի ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ,

հասարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի Ա) կետի կազմակերպությունը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,եթե

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Համաձայն ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԱՇՁԲ-78/23 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.14 կետի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին

ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ելնելով վերոգրյալից Ապարանի համայնքապետարանը << >> հունիսի 2024թվականից չկատարված 4603752/ չորսը միլիոն վեցը հարյուր երեք հազար յոթը հարյուր հիսուներկու/ ՀՀ դրամի մասով միակողմանիորեն լուծարում է Ապարանի համայնքապետարանի և ՏԱՐՈՆ-ԳԳ ՍՊԸ-ի միջև 2023թվականի օգոստոսի 31-ին կնքված պայմանագիրը, և տեղեկացնում է սույն հայտարարության ծանուցումը ստանալուց հետո մինչև ՏԱՐՈՆ-ԳԳ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի որոշումը լիազոր մարմին ներկայացնելու վերջնաժամկետը՝ տասն օրվա ընթացքում, չկատարված մասի պայմանագրի և որակավորման ապահովումները (պայմանագրի ապահովում՝ 391 723/ երեք հարյուր իննսունմեկ հազար յոթը հարյուր քսաներեք/ՀՀ դրամ, որակավորման ապահովում՝ 587 585/ հինգը հարյուր ութանասունյոթ հազար հինգը հարյուր ութանասունհինգ/ ՀՀդրամ) Ապարանի համայնքապետարանի 900452151039 հաշվեհամարին վճարելու դեպքում մասնակիցը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավար՝ **Կ.Մ.Եղիազարյան**

Կատարող՝ Ապարանի համայնքապետարանի գնումների գլխավոր մասնագետ Հ.Հովսեփյան
բջջ. +37494231893